# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Իտալիայի Հանրապետություն (Թուրին) գործուղման արդյունքների մասին

### 1. Անունը, ազգանունը, Զբաղեցրած պաշտոնը.

- Լյուբով Գևորգյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի պետ,
- Մարիետա Սարգսյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

### 2. Գործուղման վայրը և ժամկետները.

Իտալիայի Հանրապետություն (Թուրին), 2025 թվականի հոկտեմբերի 27-ից հոկտեմբերի 31-ը

### 3. Հրավիրող կողմը.

Աշխատանքի միջազգային կազմակերպություն

### 4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Արժանապատիվ աշխատանքը հարթակային տնտեսությունում» խորագրով դասընթացին, որի նպատակն էր ծանոթանալ հարթակային տնտեսության մոդելների բազմազանությանը, հարթակային տնտեսությունում արժանապատիվ աշխատանքի հնարավորություններին և մարտահրավերներին, հարթակային աշխատանքի կարգավորման զարգացող գործելակերպերին, հարթակային տնտեսությունում արժանապատիվ աշխատանքի

խթանման սոցիալական երկխոսությանը, տարածաշրջանային և տեղական հարթակներին, որոշ երկրներում գործող ոլորտային լավագույն պրակտիկաներին:

Դասընթացի ընդհանուր նպատակն էր ներկայացնել թվային աշխատանքային հարթակների կողմից առաջարկվող եկամտի և աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները, ինչպես նաև դրանց կարգավորման և կառավարման հետ կապված դինամիկան և մարտահրավերները:

5. **Քննարկված թեմաները.**

- Պլատֆորմային տնտեսության ներածություն. աճ, բազմազանություն և դինամիկա,
- Աշխատանքի բնութագրերը թվային աշխատանքային հարթակներում,
- Տեխնոլոգիայի դերը թվային աշխատանքային հարթակներում,
- Գլոբալ զարգացումներ՝ պլատֆորմային տնտեսությունում արժանապատիվ աշխատանքը խթանելու ուղղությամբ,
- Հնարավորություններն ու մարտահրավերները՝ պլատֆորմային տնտեսությունում արժանապատիվ աշխատանքի համար,
- Այլ երկրների օրինակների ներկայացում (Մեքսիկա, Ավստրալիա Եվրոպական միություն,
- Նախաձեռնություններ՝ թվային ներառումն ու հմտությունները խթանելու համար (Քենիա),
- Նորամուծական փորձեր՝ սոցիալական պաշտպանություն ապահովելու ուղղությամբ թվային հարթակների աշխատողների համար (Հնդկաստան),
- Պլատֆորմային տնտեսությունն ու ֆորմալացումը,
- Սոցիալական գործընկերների նախաձեռնություններ՝ աշխատողների բարեկեցությունը խթանելու համար,
- Ներկայացուցչություն և սոցիալական երկխոսություն հարթակային տնտեսությունում:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Դասընթացը բաղկացած էր թեմատիկ սեսիաներից, ընտրված երկրների փորձառության օրինակներից և գործնական պարապմունքներից, գիտելիքների փոխանակումից, դասընթացից ձեռք բերված գիտելիքների հիման վրա թեստային աշխատանք հանձնելուց և գնահատումից:

Դասընթացի ընթացքում ուսումնասիրել ենք «Ինչպես են թվային հարթակները ձևավորում ժամանակակից տնտեսությունը» թեման, որի ընթացքում ծանոթացել ենք հարթակային տնտեսության կոնտեքստին, մասնավորապես՝ առ այն, որ հարթակային տնտեսությունն ունի գործունեության բազմաթիվ ոլորտներ, տարբեր նպատակներ, բազմաթիվ բիզնես մոդելներ, ծառայությունների մատուցման տարբեր ձևեր, աշխատանքի տարբեր ձևեր: Հարթակային տնտեսությունը վերաբերում է տնտեսական և սոցիալական գործունեությանը, որը հեշտացվում է թվային հարթակների կողմից, որոնք իրար են կապում օգտատերերին, արտադրողներին և ծառայություն մատուցողներին: Հարթակները հնարավորություն են տալիս փոխանակել ապրանքներ, ծառայություններ կամ տեղեկատվություն և արժեք են ստեղծում միջնորդության և ցանցային էֆեկտների միջոցով: Բանախոսներից մեկը ներկայացրեց «Ավտոմատացված որոշումների կայացում հարթակային տնտեսությունում» թեման: Ավտոմատացված որոշումների կայացման համակարգերը հետևյալ սոցիալական և տեխնոլոգիական մասերի համադրություն են՝

- Որոշումների կայացման մոդել,
- Ալգորիթմներ, որոնք այդ մոդելը դարձնում են կիրառելի ծրագրային կոդի տեսքով,
- Ծրագրի մեջ ներմուծվող տվյալների հավաքածուներ,
- Քաղաքական և տնտեսական էկոհամակարգերի ամբողջությունը, որոնցում ներդրված են ավտոմատացված որոշումների կայացման համակարգերը:

Ուսումնասիրել ենք Հարթակային տնտեսությունում արժանապատիվ աշխատանքի խնդրի լուծման գլոբալ զարգացումներն ու Հարթակային տնտեսության մեջ արժանապատիվ աշխատանքին վերաբերող տարբեր զարգացումների համադրությունը, օրինակ՝ ազգային քաղաքականություններ (ազգային զբաղվածության քաղաքականություն), կարգավորող շրջանակներ, կոլեկտիվ պայմանագրեր և ավելի լայն շրջանակային համաձայնագրեր կամ նախաձեռնություններ՝ ուղեցույց լավագույն փորձի վերաբերյալ: Հարթակային տնտեսությունը ոչ բոլոր երկրներում է կարգավորված, սակայն, այնուամենայնիվ, 70-ից ավել օրենսդրական փաստաթղթեր կան ավելի քան 30 երկրներում (արաբական երկրներում, Աֆրիկայում, Ասիայում և Խաղաղ օվկիանոսում, Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և Հարավային Ամերիկայում): Որոշ օրենքներ վերաբերում են գտնվելու վայրի վրա հիմնված ուղևորափոխադրման հարթակներին և առաքման հարթակներին, իսկ որոշ օրենքներ վերաբերում են առցանց աշխատողներին: Կարգավորումներում կարևորվում են ավտոմատացված որոշումների կայացումները/ալգորիթմներ (երկու տերմիններն էլ օգտագործվում են ազգային օրենքներում):

Առանձնացվում է գործընթացի թափանցիկությունը, OSH ստանդարտների պահպանումը, սոցիալական ապահովություն, վարձատրությունը, օրինակ՝ որոշ դեպքերում վճարման որոշակի դրույքաչափեր, աշխատաժամանակի պաշտպանությունը, միավորման ազատությունն ու կոլեկտիվ բանակցությունները, հակախտրականությունը, ոտնձգությունների կանխումն ու անձնական տվյալների պաշտպանությունը: Առանձնակի կարևորվում է գործընթացի լիցենզավորմանն և լիազորությունների շրջանակներին վերաբերելի հարցերը:

Հարթակային տնետեսության մեջ հնարավորությունները իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է՝

- Հարգել զբաղվածության և ինքնազբաղվածության միջև հիմնարար տարբերությունը և դրանց համապատասխան առավելությունները՝ խուսափելու

համար իրավական որոշակիությանը և աշխատողի ընտրությանը վնասող սահմանների աղավաղումից,

- Խթանել ճկունությունը՝ թույլ տալով հարթակներին և աշխատողներին հարմարվել փոփոխվող իրականությանը,
- Աջակցել նորարարությանը և ՓՄՁ-ների աճին, հատկապես զարգացող շուկաներում, որտեղ չափազանց ծանրաբեռնված պարտավորությունները կարող են վնասել փոքր հարթակներին և խեղդել ձեռներեցությունը:

Որպես մարտահրավեր, ներկայացվեց այն, որ հարթակային աշխատանքի համաձայնեցված սահմանում չկա, ինչը բարդացնում է համապատասխան կարգավորումների մշակման գործընթացը:

Ծանոթացել ենք Մեքսիկայի փորձին: Մինչև 2024 թվականը հարյուր հազարավոր առաքիչներ, վարորդներ և թվային ծառայություններ մատուցողներ աշխատում էին առանց սոցիալական ապահովագրության կամ աշխատանքային ճանաչման: Մեքսիկան բախվում էր պաշտպանության և տեղեկատվության կառուցվածքային բացի, քանի որ այս տեսակի աշխատանքը գրանցելու կամ վերահսկելու մեխանիզմներ չուներ: Մեքսիկայի բարեփոխումը արձագանքում է ԱՄԿ-ի կոչին՝ ապահովել արժանապատիվ աշխատանք թվային տնտեսությունում՝ ներդաշնակեցնելով նորարարությունը և սոցիալական արդարությունը: Սա աշխարհում առաջին մոդելն է, որը ճանաչում է տեղայնացված թվային հարթակի աշխատանքի զբաղվածության ենթակայությունը՝ միաժամանակ պահպանելով աշխատանքային ժամերի նկատմամբ լիակատար ճկունությունը:

Բարեփոխման հիմքում ընկած է Մեքսիկայի աշխատանքային դաշնային օրենքում նոր՝ հարթակային աշխատանքը որպես հատուկ աշխատանքային հարաբերություն գլխի ավելացումը: Բարեփոխումը նաև ներկայացնում է թվային հարթակի աշխատող համարվող անձի հստակ սահմանում և սահմանում է տարբերակում՝ հիմնվելով հարթակի միջոցով ստացված եկամտի մակարդակի վրա.

Թվային հարթակի աշխատողը սահմանվում է որպես անձ, որը ծառայություններ է մատուցում հարթակի միջոցով, ստանում է վարձատրություն և գտնվում է հարթակը տիրապետող ընկերության ղեկավարության կամ վերահսկողության ներքո: Այսինքն, նույնիսկ եթե աշխատանքը թույլ է տալիս ճկուն աշխատանքային ժամեր, հարթակը թվային կերպով կազմակերպում և վերահսկում է աշխատանքը:

Անկախ աշխատողները (ցածր կամ պատահական եկամուտ ունեցողները) չեն ունենա պաշտոնական աշխատանքային հարաբերություններ. սակայն օրենքը դեռևս նրանց տրամադրում է հիմնական պաշտպանություն՝ օրինակ՝ հարթակի կողմից վճարվող մասնագիտական ռիսկերի ապահովագրություն (աշխատանքային վթարի ապահովագրություն):

Անհատը պաշտոնապես Պլատֆորմի աշխատող համարվելու համար պետք է վաստակի առնվազն մեկ ամսական նվազագույն աշխատավարձի համարժեքը Մեքսիկա քաղաքում: Այս շեմը չբավարարողները համարվում են անկախ աշխատողներ այս համատեքստում:

Մեքսիկայի բարեփոխումը ապացուցում է, որ տեխնոլոգիան և աշխատանքային արդարադատությունը կարող են առաջ շարժվել միասին:

Ծանոթացել ենք նաև Ավստրալիայի փորձին: 2024 թվականին Ավստրալիայի կառավարությունը ներդրեց թվային հարթակի աշխատողների համար նոր պաշտպանություններ, որոնք ներգրավված են որպես անկախ կապալառուներ (սկսվել է 2024 թվականի օգոստոսի 26-ին).

- Թվային հարթակի («աշխատակցի նման») աշխատողների համար հարմարեցված և կիրառելի նվազագույն չափորոշիչներ
- Անարդարացի կերպով ապաակտիվացման դեպքում ցածր արժեք և ոչ պաշտոնական վեճերի լուծում
- Համաձայնության վրա հիմնված կոլեկտիվ պայմանագրերի շրջանակ

Բարեփոխման միջոցով սահմանվել են ճանապարհային տրանսպորտի ոլորտի նվազագույն չափորոշիչներն ու պաշտպանությունները, ծառայությունների պայմանագրերում անարդար պայմանագրային պայմանների համար ցածր արժեքով և ոչ պաշտոնական վեճերի լուծումը, «Զբաղվածության» նոր սահմանումը, որը գնահատում է հարաբերությունների իրական էությունը, գործնական իրականությունը և իրական բնույթը: Ներկայացվել են նաև Քենիայի և Սինգապուրի կարգավորումները:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Դասընթացի արդյունքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկում ենք հարթակային տնտեսության բաղադրիչի ներդրման շուրջ բոլոր շահագրգիռ կողմերի հետ ինտենսիվ քննարկումներ իրականացնել՝ ապագայում նշյալ ոլորտը ՀՀ-ում կարգավորելու և այդ խմբի աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքները պաշտպանելու նպատակով:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը:**

**05. 11. 2025**